ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Правит. Вѣстн.»-ում տպուած է հետեւեալը.—Այս մայիսի 5-ին Վիլնո քաղաքում, երեկոյեան ժամը 12-ին, տեղական նահանգապետ գեներալ-լէյտենանտ Ֆօն-Վալի վրայ յարձակում է գործուած, ակնյայտնի է, քաղաքական միտումով։ Գեներալը թեթեւ կերպով վիրաւորուած է բեմօլների երկու հարուածով ձեռքից և ոտից։ Զարագործը կալանաւորուած է յանցանքի տեղում և և կը յանձնուի զինուորական դատի։

—

Մամուլի գործերի գլխաւոր վարչութեան պետ, իշխան Ն. Վ. Շախովսկոյի փոխարէն, նշանակուեց Մոսկուայի համալսարանի նախկին պրոֆէսոր և բեկտոր, լուսաւորութեան մինիստրի նախկին օգնական, սենատոր դաղանի խորհրդական Ն. Ա. Զվերեվ։